ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «25» հունվար 2024 թ N 122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 1086-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի հունիսի 16-ի ««ԷՄ ՋԻ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1086-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 1-B» բառից հետո լրացնել «N 1 (A 1)» բառերը,

2) Հրամանի հավելվածի 1-ին կետում «3402» թիվը փոխարինել «3402 31 000 0», «3402 39 000 0», «3402 41 000 0», «3402 42 000 0», «3402 49 000 0», «3402 50 000 0», «3402 90», «3402 90 100», «3402 90 900 0» թվերով:

3) Հրամանի հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 916-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208» և «3209» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):»:

4) Ուժը կորցրած ճանաչել Հրամանի հավելվածի 3-րդ կետը:

5) Հրամանի հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 957-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «4818 10», «4818 20», «4818 30 000 0», «4818 90-ից», «9619 00 300 0», «9619 00 400 0», «9619 00 500», «9619 00 710», «9619 00 750», «9619 00 790», «9619 00 890» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):»:

2. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-28 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

3. «ԷՄ ՔԻ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N PI003755 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի մարտի

15-ը ներառյալ) 1 օր հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

10/02/2024

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ